



«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2019 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

Հավելյալ նյութ՝ Պատասխանների գրքույկ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 4 տպագիր էջից:

Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված է մի հատված Նար-Դոսի «Ես և Նա» պատմվածքից: Կարդա՛ տեքստը և պատասխանի՛ր հարցերին:

Այնուհետև, այս հանդիպումից հետո, այն սակավ ժամերին, երբ խմած չէի լինում և կարողանում էի քիչ թե շատ խորանալ մտքերիս մեջ, ինձ շատ էր մտատանջում այն հանգամանքը, թե ինչ էր բուն պատճառը, որ ես այս աստիճան ընկել էի: Իսկապես որ, խո չէ՞ր կարելի այդ պատճառը դժբախտ սերը համարել — մի բան, որը շատ-շատ կարող էր միայն ժամանակավորապես ընկճել, բայց ոչ առմիշտ կործանել մարդու: Դա անհեթեթություն և կլիներ:

Բուն պատճառը պետք է որ ուրիշ տեղ լիներ: Ու սկսեցի այդ պատճառը որոնել սիրածս աղջկա դավաճանությունից դուրս, որոնել իմ Էության մեջ, որովհետև անկարելի էր, որ ես այդ աստիճան ընկնեի, եթե անկմանս սաղմերը չկրեի ինքս իմ մեջ: Բայց որո՞նք էին այդ սաղմերը, որտեղի՞ց էին ընկել իմ մեջ, ի՞նչ էր նրանց արմատը, — այս ուղղությամբ կատարած պրպտումներս դեռ երկար ժամանակ մտատանջում էին ինձ առանց որևէ եզրակացության հանգելու, մինչև որ, վերջապես, միանգամայն պատահական կերպով գտա բուն արմատը մի պատմվածքի ընթերցումից հետո, որը հանկարծ լուսավորեց իմ մինչ այդ մութ ներքին աշխարհը:

Այդ պատմվածքն իտալական մի սիրավեպ էր «Վրեժ» վերնագրով:

Այստեղ բառացի թարգմանությամբ առաջ եմ բերում այդ սիրավեպը, որի վերնագիրը, սակայն, դնում եմ «Նա»՝ պատմվածքի հերոսին ինձ հակադրելու համար:

1. ա) Ինչու՞ է հեղինակն ընտրել հակադրության միջոցով պատմվածքը կառուցելու տարբերակը:

(2 միավոր)

բ) Ըստ հեղինակային ես-ի մեկնաբանության՝ ի՞նչն է երկու սիրավեպերի հակադրության բուն պատճառը:

(2 միավոր)

գ) Արդյոք համամի՞տ ես այդ մեկնաբանությանը. շարադրի՞ր կարծիքդ հիմնավորումներով:

(3 միավոր)

2. «Նա» պատմվածքը նախապես վերնագրված էր «Վրեժ»:

ա) Ինչու՞ էր այդպես վերնագրված. մեկնաբանի՛ր՝ հենվելով պատմվածքի սյուժեի վրա:

(2 միավոր)

բ) Ուրիշ ի՞նչ վերնագիր կարող ես տալ պատմվածքի այդ հատվածին: Վերնագիրդ մեկնաբանի՛ր:

(2 միավոր)

գ) Ինչպե՞ս կվերնագրես պատմվածքի «Ես» հատվածը: Վերնագիրդ մեկնաբանի՛ր:

(2 միավոր)

3. Որտեղի՞ց է առաջացել «Նար-Դոս» գրական անվանումը, և ի՞նչ է գրողի իսկական անուն ազգանունը:

(2 միավոր)

Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված է հատված Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթը» պոեմից: Կարդա՛ այն և պատասխանի՛ր հարցերին:

Էսպես երգով,

Չոռով-գորքով

Գոռ Կոզբաղին մտավ Սասուն.

Օհան լըսեց՝ կապկեց լեզուն:

Աղ ու հացով,

Լաց ու թացով

Առաջն ելավ,

Խընդիրք արավ.

-Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, աման.

Վարդ աղջիկներ, կանայք Սասման,

Դառը դադած դեղին ոսկին,

Միայն թե գըթա մեր խեղճ ազգին,

Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,

Վերև՝ աստված, ներքևը՝ դու....

Ասավ, բերավ շարան-շարան

Վարդ աղջիկներ, կանայք Սասման:

Ու Կոզբաղին կանգնեց, ջոկեց,

Մարագն արավ, դուռը փակեց,

Քառսուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,

Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,

Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,

Մըսրա Մելիքին դարավաշ դառնան:

Դեզ-դեզ կիտեց դեղին ոսկին.

Սև սուգ կալավ հայոց ազգին:

1. Բացի Թումանյանից՝ ովքե՞ր են մշակել «Սասնա ծռեր» դյուցազներգությունը կամ գրել այդ նյութով (նշել ամսվազն երկու անուն):

(2 միավոր)

2. Ի՞նչ է դյուցազներգությունը, և ուրիշ էլ ի՞նչ բնորոշումներ ունի այն (ամսվազն երկու այլ բնորոշում):

(3 միավոր)

3. Նշի՛ր ուրիշ ժողովուրդների դյուցազներգությունների ամսվազն երկու վերնագիր:

(2 միավոր)

4. Դու՛րս գրիր մեկ փոխաբերություն և մեկ մակդիր վերը բերված հատվածից:

(2 միավոր)

5. Վերլուծի՛ր Օհանի կերպարը՝ ըստ այս հատվածի: Ի՞նչ էական տարբերություն կա նրա և «Սասնա ծռեր» Եպոսի գլխավոր հերոսների միջև:

(4 միավոր)

6. Պատկերացրո՛ւ, որ Օհանի փոխարեն դու ես և պիտի բանակցես Կոզբադու հետ: Ի՞նչ պատասխան կտայիր նրան և ինչպե՞ս կվարվեիր այդպիսի իրավիճակում:

(4 միավոր)